



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

Diocese of the Armenian Church of America

TELEPHONE:
LEXINGTON 2-5790

Փետրուար 25, 1955

630 SECOND AVENUE
NEW YORK 16, N. Y.

Մեծայարդ
Տիարք Աւետիս Օհանեան
Նախագահ Միսկան Ժողովի
Ս. Գրգոր Լուս. Եկեղեցւոյ Միսկան Ժողովի
Պիսկէմթըն.

Սիրելի

Ստացած ենք Փետրուար 13 թուակիր Ձեր Միսկան տեղեկագրութիւնը, որով կը հաղորդէիք թէ Ձեր նախագահութեամբ տեղի ունեցած է համայնքիդ Միսկան Խորհուրդի անդամոց ընտրութիւնը, եւ ներկայցնելով ընտրութեան արդիւնքը, կը խնդրէիք ընտրուած անձանց պաշտօնի վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ յիշեալ անձերը կանոնաւոր կերպով ընտրուած են եւ ընտրողներու վստահութիւնը կը վայելեն իբրեւ Եկեղեցւոյդ նախանձախնդիր, անձնուէր եւ պարտաճանաչ անդամներ, գրովս կը վաւերացնենք անոնց ընտրութիւնը, ըստ հետեւեալիս. —

Տիարք Աւետիս Օհանեան

Մանուկ Պաղտասարեան

Արշամ Գրահեան

Վահան Բէչոյեան

Մայքըլ Բէչոյեան

Արմենակ Պոյաճեան

Ճան Պաղտասարեան

Կ'օրհնենք Միսկան Խորհուրդի նորընտիր անդամները եւ վստահ ենք որ անոնք իրենց շնորհքով միացնելով Ձեր եւ իրենց պաշտօնակիցներու աշխատանքներուն, պիտի գործեն մեր ժողովուրդի հոգեւոր օգտին, Սուրբ Եկեղեցւոյ պայծառութեան եւ Աստուծոյ փառքին համար:

Մաղթելով կար եւ յաջողութիւն ի ձեռունէ.

Մնամք հայրական օրհնութեամբ եւ սիրոյ ողջունիւ.

Աղօթարար

ՄԱՄԱՐԷ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի